2.	ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ HISTORY ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ՇՈՒՇԻԻ ԳՈՐԳԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

ՀՏԴ 001.9
DOI 10.56246/18294480-2022.12-16

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի դասախոս
էլփոստ՝ ashkhunjpoghosyan@gmail.com

Վերջին մի քանի տարիներին լուրջ խնդիրներ են առաջացել մինչ 44-օրյա պատերազմը Շուշիում գոյություն ունեցած գորգի թանգարանի հավաքածուի շուրջ, որի սեփականատեր Վարդան Ասծատրյանին հաջողվել էր նախքան Շուշիի անկումը դրա մեծ մասը տեղափոխել Երևան: Հավաքածուն սեփականատերը սկսել էր վերջին քսան տարիներին՝ Արցախի գյուղերում իրականացրած իր ազգագրական-հավաքչական աշխատանքների ընթացքում: Խնդիրն այն է, որ այդ առիթով ադրբեջանցի գորգագետներն ու լրագրողները, հերքելով հայերի կողմից գորգագործությամբ զբաղվելու փաստը, մեղադրանքներ են ուղղում Վարդան Ասծատրյանին՝ նախքան Շուշիի ազատագրումը այնտեղի ադրբեջանական գորգի թանգարանի հավաքածուն հափշտակելու և այն Երևան տեղափոխելու համար: Հոդվածում մանրամասն քննարկված են այդ մեղադրանքների էությունն ու բացահայտված դրանց անհիմն լինելը: Միաժամանակ բացահայտված է, այսպես կոչված, «ադրբեջանական գորգ» հասկացության էությունն ու նաև ներկայացված են այն էթնիկական հանրույթները, որոնք առանցքային դեր են ունեցել հարավ-արևելյան Կովկասում գորգագործական ավանդույթների ձևավորման գործում: Ադրբեջանական կողմի բարձրացրած այս աղմուկը հերթական անգամ ապացուցում է այն, որ հարավ-արևելյան Կովկասում հայտնված եկվոր ցեղը ամեն կերպ ձգտում է հորինված առասպելներով հիմնավորել իր

գոյությունն ու միաժամանակ տեղաբնիկների մշակութային ժառանգությունը յուրացնելու ճանապարհով ներկայանալ որպես մշակութային գործունեությամբ օժտված երևույթ:

Բանալի բառեր՝ *Շուշի, գորգ, Վարդան Ասծատրյան, թանգարան, ադրբեջանական գորգ, Արցախ, թաթ, լեզգի, հայ:*

2012-2020 թվականներին ընթացքում «Վարդան Ասծատրյան» գորգերի հավաքածուի հիման վրա Շուշի քաղաքում գործում էր արցախյան գորգերի թանգարանը: Այս եզակի հավաքածուում ներկայացված են Արցախի գրեթե բոլոր գորգագործական կենտրոնները: Սեփականատերն այն հավաքել է 1990-ական թվականների կեսերից սկսած և առանձնահատուկ մոտեցում է ունեցել ձեռք բերվելիք յուրաքանչյուր նմուշի նկատմամբ: Առաջին հերթին կարևորվել է դրան վերաբերող հավաստի ծագումնաբանական տեղեկությունների առկայությունն ու գեղազարդման համակարգերի ու մանրամասների խորհրդաբանական բովանդակությունը: Ծագումնաբանական հարցերի պարզաբանման առումով էլ ուշադրություն է դարձրել նաև գուներանգների ու դրանց ստացման համար անհրաժեշտ բնական ներկանյութերի օգտագործման տեխնոլոգիաների վրա: Կարևոր է, որ հավաքածուի սեփականատերը այդ բոլորը գրանցել է առանձին տետրերում ու այդպիսով ստեղծել տեղեկատվական մի յուրահատուկ շտեմարան: Ակնհայտ է, որ դրանք հետազոտողների համար հիմնարար նշանակություն ունեն հատկապես արցախյան գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի ծագումնաբանական, տիպաբանական և տեխնոլոգիական հատկանիշների բացահայտման տեսակետից: Ուստի հասկանալի է, որ այսպիսի տվյալներով հագեցած հավաքածուն ինքնին գիտական բացառիկ կարևորություն է ներկայացնում ընդհանրապես հայոց գորգագործական մշակույթի արժևորման համար:

Ընդհանուր առմամբ մենք այն կարևորում ենք հետևյալ նկատառումներից ելնելով.

1. **Աղբյուրագիտական նշանակությունը:** Այս կամ այն գորգագործական կենտրոնի գորգագործական ավանդույթների, դրան բնորոշ գուներանգային ու տեխնոլոգիական առանձնահատկությունների մասին որոշակի պատկերացում կազմելու համար առաջնային նշանակություն ունեն տվյալ

կենտրոնին վերաբերող հնարավորինս փաստագրված բազմաբնույթ սկզբնաղբյուրների առկայությունը: Այս առումով Արցախն ինքնին համեմատաբար նպաստավոր պայմաններում է: Արցախի գորգագործական կենտրոնների ու դրանց բնորոշ գորգերի մասին կան ինչպես դաշտային ազգագրական նյութեր, այնպես էլ հրատարակված հետազոտություններ: Արցախյան գորգերի մեծաթիվ նմուշներ պահվում են Հայաստանի ու աշխարհի բազմաթիվ թանգարաններում, ու դրանց վերաբերող տեղեկություններն էլ նույնպես հնարավորություն են տալիս ինչ-որ չափով պատկերացում կազմել դրանց ծագումնաբանության մասին: Սակայն կա հետազոտողների, մասնավորապես արտերկրի բազմաշերտ մասնագետների մի միջավայր, որտեղ այն ամենը ինչը վերաբերում է Արցախի գորգագործական կենտրոններին, անվերապահորեն համարում են, այսպես կոչված, «ադրբեջանական» մշակույթի բաղկացուցիչ մաս: Մենք բազմիցս անդրադարձել ենք այդ խնդրին ու բնականաբար ներկայացրել ենք նման մոտեցումների անհիմն լինելու փաստը[1]:

Գորգ «Ծաղկավոր», Արցախ, Վարանդա, գ. Քարաշեն, 1870-ական թթ.
/Վ. Ասծատրյանի հավաքածու/

[1] **Poghosyan Ashkhunj, Tatev Muradyan,**Traditions of Armenian Rug Weaving Culture in Northeastern Transcaucasus /Հայոց գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասում/.-«Armenian Knot»: Traditions of Carpet Weaving Art.Proceedings of the international Conference. Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yrevan, 2016,էջ **308-315, Poghosyan Ashkhunj**, **Rug weaving Culture of Artsakh,** Historico-Ethnographic illustrated study, «Scholars' Press», Saarbrücken, Germany, 2015, **Պողոսյան Ա. Ա.,**Կովկասյան գորգերի հետազոտման սկզբունքների խնդրի շուրջ.-«Հայոց գորգագործական մշակույթը» հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր.,

Շուշիի գորգերի թանգարանի հավաքածուն այս առումով ունի բացառիկ կարևոր նշանակություն: Վարդան Ասծատրյանի հավաքած դաշտային ազգագրական նյութերը բացառապես վերաբերում են որոշակի նմուշի և հնարավորինս բացահայտում են դրա ստեղծման վայրը, ժամանակն ու որոշ դեպքերում նաև գործողի անուն-ազգանունն ու տվյալ բնակավայրում հայտնվելու հետ կապված հանգամանքները: Սրանք չափազանց կարևոր տվյալներ են ոչ միայն գորգի ստեղծման պատմության մասին պատկերացում ստանալու առումով, այլ անհամեմատ ավելի նշանակալից են հենց արցախյան գորգագործական մշակույթի կենտրոնների բացահայտման համար: Անշուշտ, այդ կենտրոնների մեծ մասի վերաբերյալ գոյություն ունեն բավականին տեղեկություններ, բայց դրանք հիմնականում գիտական վերլուծությունների արդյունքներ են հանդիսանում: Վարդան Ասծատրյանի գրառումներն ու հավաքածուում տեղ գտած գորգերի նմուշները հնարավորություն են տալիս հաստատելու մեր ունեցած ենթադրություններն ու պատկերացումները որոշակի գորգերի օրինակով: Շատ ավելի էական է այն, որ հավաքածուն ու նրան ուղեկցող դաշտային գրառումները հնարավորություն են տալիս արցախյան գորգագործական կենտրոնների՝ մեզ հայտնի բնակավայրերի քանակությունը առնվազն կրկնապատկել, մասնավորապես արցախյան գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններ են ի հայտ գալիս Վարանդայի Մուշկապատ, Հաղորտի, Կղարծի, Քերթ, Մյուրիշեն, Սարգսաշեն, Դիզակի Շեխեր, Հարավ, Ծակուռի, Խաչենի, Խանձք գյուղերը: Ավելի են ընդլայնվում մեր պատկերացումները մեզ հայտնի կենտրոնների, մասնավորապես Վարանդայի Ճարտար, Աշան, Հացի, Թաղավարդ և մի շարք այլ գյուղերի մասին: Ասվածները հավասարապես վերաբերում են նաև հավաքածուի կազմում եղած կարպետներին: Հավաքածուի աղբյուրագիտական նշանակությունը ասվածով չի սահմանափակվում: Դրա կազմում եղած բազմաթիվ գորգերի ու կարպետների գեղազարդման համալիրների թվում կան Արցախի հայերի կենցաղը, զբաղմունքները, սովորույթները, ծեսերն ու տոները ներկայացնող տեսարաններ: Դրանք պատկերացում են

2016, էջ 66-85, **Պողոսյան Ա. Ա.,**Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին.- Բանբեր հայագիտության, 2015, թիվ 2-3, էջ 78-104, **Պողոսյան Ա. Ա.,**Արցախի գորգագործական ավանդույթները հյուսիս- արևելյան Այսրկովկասի գորգարծական կենտրոններում.- Գիտական հոդվածների ժողովածու՝, Գավառի պետական համալսարան, 14, Եր., 2011, էջ 240-250:

տալիս 19-րդ դարի կեսերից մինչ 1930-ական թվականները տարածաշրջանի հայոց բնորոշ մշակութային մարամասերի, մասնավորապես պարի, երաժշտական նվագարանների, աշխատանքային գործիքների, ծիսա-պաշտամունքային նշանակության առարկաների մասին և այլն:

2. Արվեստաբանական նշանակությունը: Հավաքածուն աչքի է ընկնում տիպերի ու տարբերակների բազմազանությամբ: Այս պարագայում մեր համար հատկապես կարևոր են տարբերակները, որոնք, ներկայացնելով հանդերձ տվյալ տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգերի առանձնահատկությունները, նաև ի հայտ են բերում գորգագործական այս կամ այն կենտրոններում զարդի, նախշի, պատկերի, հորինվածքի կամ գեղազարդման ընդհանուր համակարգի ընկալման ու դրանց պատկերագրման տեղական ավանդույթները: Հենց այդ ամենն էլ հնարավորություն են տալիս տարբերակել արցախյան գորգարվեստում արմատավորված գեղազարդման համակարգերի ձևավորման ու հետագա զարգացումների շարժընթացները, ըմբռնել դրանց թվում հնամենի տարրերի ներկայությունն ու նաև գորգագործական այլ կենտրոններից ստացած ազդեցությունները: Արվեստաբանական տեսակետից առանձին կարևորություն են ներկայացնում գուներանգները: Սրանք այն հիմնական գործոններից են, որոնց համադրմամբ հնարավոր է լինում մոտավոր պատկերացում կազմել տվյալ գորգի կամ կարպետի ծագման տարածաշրջանի ու ժամանակաշրջանի մասին: Սակայն դրանք առաջին հերթին կարևորված են գորգի կամ կարպետի գեղազարդման առավել ամբողջական ու ավանդական պատկերը ստանալու առումով: Այդտեղ է, որ ակնհայտ է դառնում գորգագործական այս կամ այն կենտրոնում ձևավորված գեղագիտական ճաշակի ու գեղարվեստական ավանդույթների կատարելության բարձր մակարդակը: Գուներանգների բարձրաճաշակ համադրության արդյունքում են ստեղծվում բարձրարվեստ մշակութային արժեքներ, ու այս պարագան առավել ցայտուն է արտահայտվում գորգարվեստում:

3. **Խորհրդաբանական նշանակությունը:** Գորգի գեղազարդման համակարգն ինքնին ամբողջությամբ խորհրդաբանություն է, ու բնական է, որ գորգն ի սկզբանե ստեղծվել, եղել է որպես ծիսապաշտամունքային առարկա: Այս առումով առավել ևս Շուշիի գորգերի թանգարանի հավաքածուն ստեղծողը առանձնակի կարևոր ներդրում է կատարել գորգագործական մշակույթի այդ ոլորտով զբաղվող հետազոտություններ իրականացնելու գործում: Հավաքված բոլոր նմուշներն էլ պարունակում են գեղազարդման

այնպիսի տարրեր ու դրանցից կազմված հորինվածքներ, որոնք հնարավորություն են տալիս մեկնաբանել հնամենի սրբազնացված գորգադաշտի խորհուրդը, գորգադաշտի պարունակած ծիսապաշտամունքային բովանդակությունը: Այս տեսակետից էլ նման տեսարանները բազմազան ու բազմաբնույթ են: Ընդհանուր առմամբ հստակ են ներկայացված կյանքի հավերժությունը, մեռնող և հառնող բնությունը խորհրդանշող տեսարանները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում տոների ու ծեսերի, հարսանյաց արարողությունների հետ կապված խորհրդանշանները, որոնք, ըստ էության, ավանդական լինելով հանդերձ՝ հնարավորություն են տալիս դիտարկելու նաև ժամանակի ընթացքում դրանց կրած բովանդակային ու իմաստաբանական շարժընթացները:

4. Պատմաժողովրդագրական նշանակությունը: Գուներանգային, տեխնիկատեխնոլոգիական ու հորինվածքային առանձնահատկությունները ձևավորվում են տևական ժամանակահատվածում և կրում են տվյալ տարածաշրջանի կամ կոնկրետ գորգագործական կենտրոնի, արհեստանոցի գեղազարդման արվեստի, սովորույթների, բնակլիմայական միջավայրի և այլ գործոնների անմիջական ազդեցությունները: Շուշիի գորգերի հավաքածուի գերակշռող մասը ստեղծվել է Արցախի գորգագործական կենտրոններում, և դա, բացի Վարդան Ասծատրյանի գրանցած տեղեկություններից, հաստատվում է մեր ու այլոց հավաքած դաշտային ազգագրական տվյալներով: Կարևոր է, որ այդ գորգերից որոշների ծագմանը վերաբերող տեղեկությունները լույս են սփռում բուն Արցախում տեղի ունեցած ներէթնիկական և պատմական Հայաստանի այլ տարածքներից Արցախ ուղղված տեղաշարժերի վրա: Միաժամանակ այդ տեղեկությունների հիման վրա կարելի է որոշակիորեն դիտարկել արցախյան գորգարվեստի տեղական առանձնահատկություններն ու արտաքին ազդեցությունների հետքերը: Վերն ասվածներից ելնելով էլ խնդրո առարկա հավաքածուն կարևորում ենք որպես պատմական Հայաստանի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի հետևանքով գորգագործական մշակույթի, առաջին հերթին արցախյան գորգագործական մշակույթի առանձնահատկությունների ձևավորման, դրանց ակունքների ու նաև դրանց հետագա տարածումների բացահայտման հավաստի սկզբնաղբյուր:

Թուրքական վերջին հարձակման հետևանքների պատճառով հավաքածուի սեփականատերը կարողացել է Արցախի Հանրապետության կրթու-

թյան, գիտության ու մշակույթի նախարարության օգնությամբ թանգարանի ցուցադրությունը տեղափոխել Երևան:

Բնականաբար Երևանում էլ կային հավաքածուի տեղավորման ու ցուցադրման հետ կապված խնդիրներ, սակայն հնարավոր եղավ այն տեղավորել ճարտարապետության թանգարանում և ներկայացնել լայն հասարակությանը:

Շուշիի գորգերի թանգարանի հավաքածուի մասին գոյություն ունեցած պատկերացումների մասին: Հավաքածուի՝ Երևանում հայտնվելը մեծ աղմուկ էր բարձրացրել Բաքվում: Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ այդ աղմուկը սկսվել էր դեռևս 2012 թվականից, երբ տեղի ունեցավ այդ թանգարանի հանդիսավոր բացումը: Ընդ որում պետք է նկատի ունենանք, որ այն առաջին այդպիսի թանգարանն էր հայ իրականության մեջ: Մինչդեռ Բաքվում հայոց գորգերի մասին գոյություն ուներ բացարձակապես այլ համոզմունք, ըստ որի՝ այդպիսին ուղղակի գոյություն չի ունեցել: Բաքվի գորգագետները համոզված են, որ հայերն ընդհանրապես գորգագործությամբ չեն զբաղվել, հետևաբար խնդրո առարկա հավաքածուն էլ ադրբեջանական գորգեր են, որոնք Վարդան Ասծատրյանը գողացել է 1988 թվականին Շուշիում հիմնադրված գորգերի թանգարանից: Ընդ որում՝ Շուշիում իրականում էլ գոյություն ուներ նման թանգարան, որը՝ որպես Բաքվում գործող ադրբեջանական գորգերի թանգարանի մասնաճյուղ, հիմնվել էր, այսպես կոչված, «ադրբեջանական գորգ» հասկացության հիմնադիր, ոչ անհայտ Լյաթիվ Քերիմովի նախաձեռնությամբ:

Հենց այս ոգով էլ պարբերաբար հրապարակվում են հաղորդումներ, որոնց հեղինակները համոզված են, որ խնդրո առարկա հավաքածուն ամբողջությամբ կազմված է «ադրբեջանական» գորգերից, որոնց մեծ մասը պահվում էր Քերիմովի հիմնած թանգարանում, իսկ մնացածներն էլ պատկանել էին Շուշիում բնակված մահմեդականներին: Ընդ որում դրանց հեղինակների շարքում գորգագետներից բացի նաև տարատեսակ լրագրողներ ու արվեստագետներ են, որոնք հավաքածուի և հայոց գորգագործական մշակույթի մասին ունեն միևնույն տեսակետը:

Մենք ներկայացնում ենք դրանցից մի քանիսը այնքանով, որքանով որ բոլորին անդրադառնալը ընդհանրապես հնարավոր չէ՝ դրանք անընդհատ են հայտնվում, բացի դրանից ՝ բոլորն էլ կրկնում են միևնույն միտքը՝ Վարդան Ասծատրյանի հավաքածուն Շուշիի «ադրբեջանական» գորգերի թանգարանից գողացված գորգերն են, հայերն էլ երբեք գորգ չեն գործել:

Դրանց թվումն է, օրինակ, լրագրողուհի Նաթելլա Ռուստամովան, որին զարմացրել է այն, որ Երևանում «հայ գորգագետները խոսում են հայկական և հատկապես ղարաբաղյան գորգերի մասին»[2]:

Գորգ «Փառակա», տարբերակ, Հյուսիսային Արցախ, գ. Գյուլիստան. /Վ. Ասծատրյանի հավաքածու/

Իր այդ մտքի հիմնավորման համար էլ նա հղում է կատարել իր կարծիքով «կովկասյան գորգերի մեծ գիտակ և գորգերի հավաքորդ, պրոֆեսոր Վիդադի Մուրադովին»: Ըստ այդմ պարզվում է, որ գորգագործությունը հայերին բնորոշ չէ, որ Ղարաբաղում հայերի համատեղ բնակեցման պատմությունը սկսվում է 19-րդ դարի կեսերից, ուստի նրանք չեն էլ կարող հավակնել ադրբեջանական, այդ թվում՝ ղարաբաղյան գորգագործությանը, որի հիմնական չափանիշներն ու կոմպոզիցիաները ձևավորվել և կատարելագործվել են դեռևս 18-րդ դարում»[3]: Ահա այս մակարդակի մասնագետներ են կարծիք հայտնում հարավային Կովկասում գորգագործական մշակույթի ծագման մասին: Իրականում էլ 1980-ական թվականներին հարևան խորհրդային հանրապետությունից գորգի խոշոր վաճառականներին գորգեր մատակարարող Վիդադին այլ բան չէր էլ կարող ասել. նա ոչ պատմաբան է, ոչ արվեստագետ, ոչ էլ ազգագրագետ: Նա բնականաբար տեղյակ չէ, որ Արցախը պատմական Հայաստանի մի մասն է ու միշտ էլ եղել է հայաբնակ: Բայց հարկ եմ համարում ընդգծել, որ ընդհանրապես պատմության, մշակույթի ցանկացած ոլորտին վերաբերող հրապարակումներում այդ երկրում հիմնավորումների համար անհրաժեշտ փաստեր լինել կամ չլինելը, մասնագետ լինել կամ չլինելը բացարձակապես նշանակություն չունի: Այնպես որ «պրոֆեսոր» Վիդադին ասել է այն, ինչ որ մտքովն անցել է կամ փողոցում մեկից լսել է: Բացի դրանից՝ կարևոր էլ չէ՝ փողոցում է լսել, թե սկզբնաղբյուրում է կարդացել, միևնույն է, ասում կամ հրապարակում են այն, ինչ իրենց ցանկալի է: Ի դեպ, այս «պրոֆեսորի» ուսումնասիրություններին ծանոթանալուց հետո, դաղստանյան ու մասնավորապես լեզգիական գորգերի փորձագետ-արվեստագետ Գերման Կաբիրսկին հանգել է այն

[2] **Нателла Рустамова**, автор haqqin.az 5 сентября 2021, 18:26:
[3] **Нателла Рустамова**, նույն տեղում:

կարծիքին, որ «մեղմ ասած դրանք կապ չունեն գիտության հետ... ամեն դեպքում դրանում զարմանալու բան չկա, Ադրբեջանի համար այդպիսի պրոֆեսորները չափանիշ են, ոչ թե բացառություն: Դրանց պատճառով է, որ ամբողջ աշխարհում այդ երկրի պատմագիտությունը ճանաչված է որպես հակագիտական ու վնասակար ակադեմիական առարկաների համար»[4]: Մենք նույնպես ամբողջությամբ կիսում ենք այդ կարծիքը:

Ի հաստատումն ասվածի՝ բերենք ևս մեկ օրինակ. ոմն լրագրող Հուսեյն Սաֆարով նույնպես համարում է, որ Վարդան Ասծատրյանը Երևան է տեղափոխել ադրբեջանական գորգեր, որոնց թվում Շուշիի ադրբեջանական գորգերի թանգարանի հավաքածուի մի մասն է և շուշեցի ադրբեջանցիների տներում եղածները: Բնականաբար որևէ հիմնավորում կամ վկայություն նա չունի ու չի բերում[5]: Այս հատկանիշը բնորոշ է այդ երկրի պատմության ու մշակույթի հարցերով բոլոր զբաղվողներին: Բայց նրանք ունեն մի կարևոր հատկանիշ ևս. օգտագործում են գրավոր սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունների բովանդակությունն այնպես, ինչպես իրենք են հարմար գտնում: Օրինակ՝ գորգագործական մշակույթի առումով Բաքվի մասնագետների հրապարակումներում լայն տեղ է տրվում Շուշիի ռեալական դպրոցի ուսուցիչ Յ. Զեդգենիձեի աշխատությանը, որը նվիրված է Շուշիի գորգագործությանն ու հրատարակվել է 1891 թվականին: Բաքվի ադրբեջանական գորգերի թանգարանի նախկին տնօրեն, դոկտոր-պրոֆեսոր Ռոյա Թաղիևան, անդրադառնալով այդ աշխատությանը, նշում է, որ Յ. Զեդգենիձեն գրել է, որ Շուշիում գործել են մեծ քանակությամբ պատվերային գորգեր ու պատվիրատուների թվում եղել են նաև հայեր, որոնք պատշաճ մակարդակով չէին կարող գորգ գործել: Նրանց պահանջով ադրբեջանական գորգերի վրա գործում էին հայերի անուններ և տարատեսակ ցանկություններ: Այդ կերպ նրանք հնարավորություն են ստեղծել այդ ամենի մասին չտեղեկացված մասնագետներին ադրբեջանական գորգերը ներկայացնել որպես հայկական»[6]: Զեդգենիձեի աշխատությունից միանգամայն ազատ, իրակա-

---

[4] **Герман Кабирски,** Испанский стыд, или Ковровые фантазии Азербайджана https://riaderbent.ru/ispanskij-styd-ili-kovrovye-fantazii-azerbajdzhana.html

[5] **Гусейн Сафаров,** Как Асцатрян азербайджанские ковры за армянские выдавал: Разоблаченые фотофакты от Caliber.AZ, **АНАЛИТИКА** - 28 Января 2022 - 18:47

[6] **Ройа Тагиева,** Ковровое искусство Азербайджана.
http://woman-az.ru/viewtopic.php?t=298,

նում բնօրինակի հետ որևէ աղերս չունեցող մեջբերումներ այդտեղ բազմաթիվ են:

Մինչդեռ իրականում Յակով Զեդգենիձեն Շուշիում գորգերի արտադրության մասինի շարադրել է միանգամայն այլ դիտարկումներ: Նա գրել է, որ «պատվերով գորգ գործողները հատուկենտ են, բոլորը աշխատում են ազատ վաճառքի համար», այսինքն՝ հայ պատվիրատուների ու նրանց պահանջների մասին Ռոյա Թաղիևայի պատմածը գոյություն չի ունեցել[7]: Զեդգենիձեն արձանագրել է, որ «թաթարը ծույլ է, նա նույնիսկ աշխատանքն ամոթ է համարում և ձգտում է ապրել համարյա ստրուկի վիճակում գտնվող կնոջ հաշվին: Այդ պատճառով էլ թաթար կինը ստիպված է իր ժամանակի մեծ մասը տրամադրել ոչ թե տնային տնտեսությանն ու երեխաների խնամքին, այլ գումար վաստակել, տվյալ դեպքում՝ գորգ գործել: Հայկական ընտանիքում այդպես չէ: Այստեղ տղամարդը ձեռք է բերում ապրուստի միջոցներ, իսկ կինը պատասխանատու է տնային գործերի և երեխաների խնամքի համար: Ուստի հայ կինը գորգագործությամբ զբաղվելու հրատապ անհիրաժեշտություն չունի…»[8]:

Զեդգենիձեն նշում է նաև, որ թաթարները գորգագործության մասին այնքան էլ բարձր կարծիք չունեն, նրանք համարում են, որ գորգագործական տորքը «ստեղծվել է սատանայի կողմից, և այդ պատճառով նրանք այն անվանում են շեյթան-քարխանա, այսինքն՝ սատանայի արհեստանոց[9]: Նույն աղբյուրն ունի Շուշի քաղաքի մարդահամարի արդյունքները, ըստ որոնց՝ 1886 թվականին այնտեղ ապրել է 30945 մարդ, այդ թվում՝ 18690 հայ, 11940 թաթար, 315 ռուս[10]:

Հենց այսպիսի տեղեկություններ է պարունակում Զեդգենիձեի աշխատությունը: Բայց ինչպես տեսնում ենք, ադրբեջանցի գորգագետներին դրանք չեն էլ հետաքրքրում, նրանց հիմնական նպատակը «ադրբեջանական գորգ» հասկացության ստեղծելն ու մասնագիտական շրջաններում այն շրջանառության մեջ դնելն է: Հարկ է շեշտել, որ այդ ուղղությամբ նրանք աշխատել են 1950-ական թվականներից և հասել են մեծ հաջողությունների: Եվ այս պայմաններում էլ ոմն բաքվեցի լրագրողուհի Լեյլա Թարիվերդիևան

---

[7] **Зедгенидзе Я.,** Город Шуша. Производство ковров и паласов, СМОМПК, вып. XI, Тифлис,1891, стр. 1:

[8] **Зедгенидзе Я.,** նշվ. աշխ., էջ 3:

[9] **Зедгенидзе Я.,** նշվ. աշխ, էջ 47-48:

[10] **Зедгенидзе Я.,** նշվ. աշխ, էջ 1:

ոչ ավել, ոչ պակաս գրում է, որ *«ադրբեջանցի մասնագետները, ի տարբերություն հայերի, զբաղվում են ոչ թե քարոզչությամբ, այլ գիտությամբ»*, որ *«գորգերը վաղուց դադարել են կենցաղային առարկա լինելուց, ներկայումս դրանք գիտական հետազոտությունների առարկա են, որտեղ «միայն մորս արև» ասելով ոչ մի բան չի ավարտվի»*, որ *«հայերը չեն կարողանում ապացուցել, որ ղարաբայան և ադրբեջանական գորգերը պատկանում են իրենց, նրանք դա հայտարարում են, բայց պատմականորեն չլինելով այդ տարածաշրջանի բնակիչներ, չունեն համապատասխան ավանդույթներ և հմտություններ, իսկ որքան որ ձեռք են բերել երկու հարյուր տարի ադրբեջանական թուրքերի հետ համատեղ ապրելու ընթացքում, անբավարար իրենց հայտարարությունները գիտականորեն ապացուցելու համար»*[11]:

Նման մի բան էլ հայտարարում է վերը հիշատակված մեկ այլ լրագրող՝ Հուսեյն Սաֆարովը. «Հայաստանը ոչ միայն միշտ ձգտել է սեփականացնել այդ գորգերը, այլ նաև դրանք համարում է որպես հայկական մշակույթի բաղկացուցիչ մաս: Օրինակ՝ հայ հետազոտողներից մեկը՝ Աշխունջ Պողոսյանը, հայտարարում է, որ տարբեր ժամանակներում ադրբեջանցիները Ղարաբաղի բնակիչներից գնել են հայկական գորգեր: Եղեռնի ժամանակ հայերի տներից հափշտակված գորգերը հետագայում աճուրդի էին հանվել, բայց միայն թուրքերի համար: Կասկած չկա, որ այդ գորգերը այժմ ներկայացվում են որպես ադրբեջանական, անատոլիական կամ թուրքական, սակայն այնքան էլ հեշտ չէ դա ապացուցելը»[12]: Այստեղ ամեն ինչ ճիշտ է ասված, ուղղակի ես այս մտքերը արտահայտել եմ նաև բազմաթիվ հարցազրույցներում, ուստի վստահ չեմ վերջին բառերի հարցում, որովհետև ասվածների ապացուցման համար խնդիրներ չկան այստեղ: Ապացուցման համար բազմաթիվ են գրավոր սկզբնաղբյուրներից քաղված համապատասխան վկայությունները, օրինակ, նման աճուրդին ականատես եղած Զապել Եսայանի «Ժողովրդի մը հոգեվարքը» հոդվածում հրապարակվածները[13]:

---

[11] **Лейла Таривердиева,** Тайны азербайджанского ковра не открылись армянским ворам - НАША АНАЛИТИКА – ФОТО, ПОЛИТИКА, 8 августа 2021 00:10 22 175:

[12] **Гусейн Сафаров,** նույնն տեղում:

[13] Տե՛ս, օրինակ, **Զ. Եսայան**, Ժողովրդի մը հոգեվարքը, «Գործ», Բաքու, թիվ 2, էջ 127, **Ա. Ա.Պողոսյան,** Վասպուրականի հարավ-արևելյան գավառների հայոց գորգագործական մշակույթի մասին, «Բանբեր հայագիտության», Եր., 2014, թիվ 2-3., էջ 109, **Ա. Պողոսյան**, «Պազիրիկ» գորգի ծագումնաբանության մասին, «Էջմիածին», նոյեմբեր-դեկտեմբեր, 2008, ԺԲ, էջ 63-79 և այլն:

Այս նույն հեղինակը համոզված է նաև, որ Վարդան Ասծատրյանի հավաքածուի կազմում եղած բազմաթիվ գորգերի հայատառ հիշատակարանները հայ գորգագործների կողմից ավելացված են հետագայում, ընդ որում, իր կարծիքով, դա հեշտությամբ կարող են հաստատել Բաքվի փորձագետները[14]:

Կարպետ՝ «Ջրաբերդ»սումախ, 18-րդ դ. երկ. կես, Դերբենտ-Խաչմաս. /Վ. Ասծատրյանի հավաքածու/

Հասկանալի է, որ մենք չենք կարող այստեղ ներկայացնել այս կարգի բոլոր հրապարակումները՝ դրանք մեկը մյուսից անգրագետ և անհիմն են, և ինչպես վերն ասվեց, բոլորն էլ մեզ մեղադրում են, այսպես կոչված, «ադրբեջանական գորգերի» յուրացման հարցում:

Իսկ ինչքանո՞վ է գորգագործությունը բնորոշ քոչվորներին: Սա բավականին կարևոր հարցադրում է, քանի որ մասնագիտական շրջանակներում իշխում է գորգագործական մշակույթի ծագումը քոչվորական կենսաձևին կապելու տեսությունը: Ըստ էության դա հիմնազուրկ տեսություն է, թեև մենք բոլորովին էլ չենք բացառում գորգագործությամբ զբաղվելու քոչվորների հնարավորությունը: Մենք նկատի ունենք այն հանգամանքը, որ գորգը որպես այդպիսին հանդիսացել է վերնախավային առարկա և դրանք գործել են հիմնականում վերնախավին պատկանող արհեստանոցներում: Բնական է, որ քոչվորական ցեղերի վերնախավի կենցաղում նունպես ընդունված էր գորգերի օգտագործումը, ու հայտնի են դրա մասին վկայող պատկերային ու գրավոր բազմաթիվ տեղեկություններ: Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե նմանատիպ բոլոր ցեղերի մոտ էր, որ

[14] **Гусейн Сафаров,** նույն տեղում:

գոյություն ուներ գորգագործական մշակույթ: Համենայնդեպս 18-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում Շուշիի Փանահ խանի հրավերով Արցախում ու մերձակայքում հաստատված մի քանի տասնյակ ցեղերի զբաղմունքների թվում այն բացակայում էր: Այդ առումով հատկանշական է խորհրդային ժամանակաշրջանի պատմաբան Վ. Ն. Լևիաթովի կարծիքը: Նա, անդրադառնալով Դաշտային Ղարաբաղում և հարակից տարածքներում հաստատված քոչվոր ցեղերի կենսաձևին, նշել է, որ դրանք ամառային արոտավայրեր /Արցախի և Սյունիքի ալպիական արոտատեղիների մասին է –Ա. Պ./ տանող ճանապարհին զբաղվում էին կողոպուտով և իսկական աղետ էին նստակյաց բնակչության համար[15]:

Ավելի ուշագրավ է Փանահ խանի վեզիր, աշուղ Վագիֆի մուղամներից մեկը, որում ասվում է՝

... Եթե գեղեցկուհու իրանը ջնարակի պես նուրբ է
Նա արժանի է ոչ թե խանայի /գորգ գործելու սարք՝ տորք/, այլ հինային
Քոչվորն ապաստան չունի, անօթևան է
Միթե կարո՞ղ է նա վարժվել դրան[16]:

Կա ևս մեկ այլ խնդիր: Վերը հիշատակված Վիդադիի կողմից Արցախում հայերի հայտնվելու մասին պատկերացումը միայն իրենը չէ, դա Բաքվում ընդունված տեսակետ է, այն ընդունում են թե՛ այսպես կոչված մասնագետները և թե՛ լրագրողները: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ դա նաև անընդհատ քարոզվում է արտերկրում: Չխորանալով այդ խնդրի մեջ՝ ուղղակի հիշեցնենք, որ Արցախում հայերի ապրելու մասին շատ ուշագրավ տեղեկություններ է նշել Վրաստանի Հերակլ 2-րդ թագավորը: Նա 1769 թ. գրված իր նամակներից մեկում գրում է, որ «Խամսան /Ղարաբաղը/ կազմված է յոթ մելիքություններից, ժողովուրդը հայեր են միչև քառասուն հազար տուն և այնտեղ է գտնվում հայոց պատրիարքը»[17]: Սա շատ կարևոր տեղեկություն է և վկայում է այն մասին, որ մինչ այդ արդեն տեղի ունեցած աշխարհաքաղաքական բուռն գործընթացներից հետո, մասնավորապես թուրք-պարսկական պատերազմների ընթացքում տեղի ունեցած բռնագաղթերի, Փանահ խանի կողմից իրականացված իսլամական ցեղերի ներթա-

---

[15] **Левиатов В.Н.,** Очерки из истории Азербайджана в XVIII веке, Б, 1948, стр. 40:
[16] **Керимов Л.**, Азербайджанский ковер, т.3, Б., 1983, стр.121.
[17] Грамоты и другие исторические документы XVIIIстолетия относящиейся к Грузии, т.1, 1768 по 1774гг., под редакцией А.А.Цагарели, Санкт Петербург, 1891, стр. 435-436.

փանցումների պայմաններում, այնուամենայնիվ, Արցախը մնացել էր հայաբնակ:

Ն. Ռուստամովայի հրապարակումից պարզվում է, որ Բաքվում հայկական գորգերի մասին կան նաև այլ պատկերացումներ: Մասնավորապես պրոֆեսոր Ա. Ջեբրայիլովը, որը ծանոթ է արաբական և եվրոպական գրավոր աղբյուրներին, տեղեկացել է, որ «հայերը հյուսել են բարձրորակ գեղեցիկ գորգեր»: Զարմանալին այն է, որ այդ լրագրողուհին էլ թերահավատորեն է վերաբերում պրոֆեսորական կարծիքին: Բայց պրոֆեսոր Ա. Ջեբրայիլովն էլ նաև ավելացնում է, որ գորգագետներին հայտնի չեն բավարար քանակությամբ պահպանված հայկական հնագույն գորգեր, ինչպիսիք են սելջուկյան, օսմանյան կամ մամլուքյան գորգերը[18]:

Ըստ էության այս հեղինակներն ընդհանրապես գաղափար չունեն գիտական հետազոտություններ իրականացնելու սկզբունքների մասին, նրանց շարադրած տեսակետները հիմնավորումներից զուրկ են, հակառակ դեպքում տեղյակ կլինեին որ հայոց հնամենի գորգերն ու գորգապատկերները բազմաթիվ են, ու դրանց թվումն են արցախյան գորգագործական կենտրոններում ստեղծված դասական վիշապագորգերի լավագույն նմուշները: Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ պրոֆեսոր Ա. Ջեբրայիլովը, այնուամենայնիվ, նկատելիորեն տարբերվում է Բաքվում «ստեղծագործող» մյուս բոլոր գորգագետներից. նա ընդունում է միջնադարում հայերի կողմից գորգագործությամբ զբաղվելու և որակյալ գորգեր գործելու փաստը:

Ինչ վերաբերում է «ադրբեջանական գորգ» արտահայտությանը՝ ուղղակի այդպիսի գորգեր չեն եղել, քանի որ նման էթնոնիմ ընդհանրապես գոյություն չի ունեցել մինչև 1930-ական թվականները: Մինչդեռ հայտնի է, որ հարավարևելյան Կովկասում գորգագործությամբ ավանդաբար զբաղվում էին թաթերը, լեզգիները, ավարները, Ղուբայի տարածաշրջանի որոշ լեռնային էթնիկ տարրեր և այլն[19]: Այնտեղ գորգագործությամբ էին զբաղվում նաև հայերը, ովքեր մինչև 1980-ական թվականները բնակվում էին վերոհիշյալ շրջանի գորգագործության բոլոր կենտրոններում, քրդերը, թուրքմենական ծագումով տարբեր ցեղեր, այդ թվում՝ ղարափափախներ, թարաքյամաները, ավշարները, շահսևանները և այլն, ինչպես նաև. կովկասյան թաթարները: Բայց գորգագործության և այլ հմտությունների բնագավառում ա-

[18] **Нателла Рустамова**, նույն տեղում:
[19] **Герман Кабирски,** նույն տեղում:

ռանձնանում էին թաթերը: Աշխարհագրագետ և տնտեսագետ Մ. Վելիև-Բախարլին 1910-20-ական թվականներին իր իրականացրած հետազոտությունների արդյունքում պարզել է, որ 18-րդ դարում թաթերը կազմում էին Բաքվի խանության բնակչության հիմնական և Ղուբայի ու Շիրվանի խանությունների բնակչության զգալի մասը: Ընդհանրապես հյուսիսարևմտյան Ադրբեջանի, Ղուբայի և Շամախիի շրջանների լեռնային հատվածի, ինչպես նաև Ապշերոն թերակղզու թուրքերի մեծ մասը բաղկացած է թուրքացված թաթերից[20]:

Ուշագրավն այն է, որ հենց այդ տարածքներն էլ համարվում են գորգագործության առավել զարգացած կենտրոնները հարավարևելյան Կովկասում:

Թաթերի մասին նմանատիպ տեղեկություններ է գրանցել նաև հայտնի իրանագետ, պրոֆեսոր **Բորիս Միլլերը**[21]:

Այս դեպքում մենք կարևորում ենք այն, որ Բ. Միլլերը նշում է, որ թաթաբնակ բոլոր գյուղերում էլ ինքը արձանագրել է հայկական գերեզմանոցների ու եկեղեցիների հետքեր, որոնք, անտարակույս, մատնանշում են մերձկասպյան տարածաշրջանում նախկինում գոյություն ունեցած հայաբնակ հարյուրավոր բնակավայրերի գոյությունը[22]: Մասնավորապես նա հիշատակում է Գյոկչայի գավառի թաթաբնակ գյուղերի, Ղուբայի գավառում՝ Քիլվարի, Շամախու գավառում՝ Մատրասայինը, Խաչմասի գավառում հայ-թաթական Խաչմաս ավանի ու երկաթուղային կայարանի և բազմաթիվ այլ նմանատիպ բնակավայրերի բնակիչներ իրենց համարում են նախկին հայեր[23]:

Հարավային Կովկասի գորգագործությանն 1920-30-ական թթ. անդրադարձել է նաև այդ ոլորտի հայտնի մասնագետ և հետազոտող Մ. Իսաևը: Նա, կարևորելով թաթերի գորգագործական ավանդույթները, նշում է, որ մինչև «ներկա ժամանակները /1930-ական թթ.- Ա.Պ./ հյուսիսարևելյան Ադրբեջանում /Ղուբայում, Ապշերոնում/ թաթերով բնակեցված գյուղերում բարձր մակարդակի վրա էր գորգերի արտադրությունը, որոնք աչքի են ընկնում բարձր գեղարվեստական ճաշակով և կատարման որակով: Այդ առու-

---

[20] **Мухаммедгасан Велиев (Бахарлы),** Азербайджан. Физико- географический, этнографически и экономический очерк, Баку, 1921, стр.36-40.:

[21] **Миллер Б.,** Таты, их расселение и говоры, Баку, 1929. **http://miacum.ru /docs/taty/# g12**

[22] **Б. Миллер,** նույն տեղում:

[23] **Б. Миллер**, նույն տեղում:

մով նշանավոր են հատկապես Ղուբայի շրջանի նախալեռնային, ինչպես նաև ավելի բարձրադիր տարածքների գյուղերը (Զեյվա, Փերեբեդիլ, Ալիխանլի, Ղոնաղքենդ և այլն), իսկ Ապշերոնյան թերակղզում էլ Սուրահանի, Մաշտաղա,Զիրա, Բալախանի, Մարդաքյան, Նարդարան, Խիլա և մի շարք այլ թաթաբնակ գյուղեր»[24]: Թաթերի գորգագործության տեխնոլոգիական լավագույն հատկանիշների և գեղարվեստական մակարդակի մասին գրել են նաև այլ հեղինակներ: Մասնավորապես, 1960-ական թվականներին հրատարակված Կովկասի ժողովուրդների ազգարությանը վերաբերող ուսումնասիրությունների երկրորդ հատորում նշված է, որ «Թաթերի գորգագործության կենտրոններն են Ղուբայի շրջանի գյուղերը / Դարա-Զիչի, Շուդուգ, Ռուստով, Պիրեբեդիլ, Կիլվար և Ապշերոնի այլ գյուղեր. Թերակղզի /Սուրախանի, Խիլա և այլն/ և մոտակա Խիզինի օկրուգը, որտեղ կար թաթաբնակ 36 գյուղ: Այդ նույն աղբյուրում շեշտված է, որ Ղուբայում գործված գորգերը լավագույններից են Ադրբեջանում[25]:

Ինչ վերաբերում է վերոնշյալ շրջանի հայ բնակչությանը, ապա Մ.Իսաևը պարզեց, որ Ախսու և Քյուրդամիր շրջանների արևմուտքում, որպես գորգագործության կենտրոն, առանձնանում է Կարամարյան ենթաշրջանը, որն ընդգրկում է հիմնականում հայկական Քըրք, Քալագյա գյուղերը: Սոլթանքենդը և Ուշտալը, որոնք ներկայումս /1930-ական թթ.-Ա.Պ./ չունեն արդյունաբերական որևէ նշանակություն: Բացի այդ, պարզվում է, որ Շիրվանի գորգերի խմբում առանձնահատուկ տեսակ են հանդիսացել Կարամարյան ենթաշրջանի հայկական գյուղերի արտադրանքը: Դրանք տեխնիկատեխնոլոգիական, գեղազարդման ու գունեռանգային հատկանիշների առումով համահունչ են Ղարաբաղյան և Ապշերոնյան թերակղզում ձևավորվող գորգագործության ավանդույթներին: Իսաևի դիտարկումների համաձայն՝ դրանք գրեթե քառակուսաձև էին և ունեին բավականին բարձր խտություն (չափերը՝ 2*2.5, հանգույցների խտությունը՝ 36*40): Դրանք արտադրվում էին սահմանափակ քանակով, շուկայում ունեին բարձր գին ու տարբերակվում էին **էրմենի հիլա** (այսինքն՝ հայկական գորգ - Ա.Պ.) անունով: Բայց առաջին համաշխարհային պատերազմից հետո և դրան հաջորդած իրադարձությունների պատճառով գորգագործությունն այս տարածքում գրեթե դադա-

[24] **Исаев М.**, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, էջ 25:

[25] **Народы Кавказа,** т. 2**,** под редакции Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая, М., 1962, էջ182-183.

ռեց գոյություն ունենալուց[26]: Նույն հեղինակը Արցախի հյուսիսային մասում որպես գորգագործական կենտրոններ առանձնացրել է Ոսկանապատ, Վերիշեն, Գետաշեն, Միրզիկ, Մուրութ, Էրքեջ և մի շարք այլ հայկական գյուղերը[27]: Այս տեսակի տեղեկությունները չեն հետաքրքրում Բաքվի «գորգագետներին» ու տեղ չունեն դրանց հրապարակություններում:

Այսպիսով, ամփոփելով մեր այս հակիրճ արձագանքը՝ միանշանակ կարելի է ասել, որ հարավարևելյան Կովկասում գորգագործական մշակույթով հիմնականում զբաղվում էին հայերը, թաթերը, լեզգիներն ու դաղստանյան լեզվաընտանիքին պատկանող մի շարք ցեղեր: Նույն իրավիճակն էր նաև հարավային Կովկասի կենտրոնական հատվածում՝ այդ թվում՝ Արցախում, ուղղակի այդ տարածաշրջանի գորգագործական կենտրոններում լեզգիների և դաղստանյան այլ ցեղերի փոխարեն նկատելի դեր ունեին քրդական ցեղերը: Կովկասյան թաթարների կողմից գորգագործությամբ զբաղվելու դրվագը կար միայն Շուշիում, որին վերաբերող իր վերը բերված դիտարկումներն էր կատարել Յ. Զեդգենիձեն: Իրանին սահմանակից մերձկասպյան գորգագործական կենտրոններում էլ գորգագործությամբ հիմնականում զբաղվում էին իրանալեզու թալիշները: Այսինքն՝ լավագույն ցանկությունների դեպքում էլ հնարավոր չէ այսպես կոչված «ադրբեջանական» գորգի ավանդույթներ կամ նմուշներ գտնել նշված գորգագործական կենտրոններում: Այլ հարց է, որ այդ իրողությունը բոլորովին էլ չի խանգարում բաքվեցի «գորգագետներին»՝ աշխարհով մեկ քարոզելու «ադրբեջանական» գորգի մասին իրենց մոգոնած լեգենդը և ըստ այդմ էլ հայտարարել, որ Վարդան Ասծատրյանի գորգերը Շուշիի «ադրբեջանական» գորգի թանգարանից գողացված հավաքածուն է:

Մինչդեռ հենց այս հայտարարության մեջ էլ ամբողջ թատրոնն է, ըստ որի «արվեստի պատմաբանը /այսինքն՝ Վարդան Ասծատրյանը-Ա.Պ./ լկտիաբար և անօրինական կերպով է նախկինում գոյություն ունեցող Շուշայի գորգերի թանգարանից հանել հավաքածուի գրեթե կեսը և այժմ փորձում է ինչ-որ կերպ արդարացնել այդ ճակատագրական գողությունը»[28]: Իսկ իրականում ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ հավաքածուն և ի՞նչ էր կատարվել դրա հետ:

---

[26] **Исаев М.**, նշվ. աշխ., էջ 123.
[27] **Исаев М.**, նույն տեղում:
[28] **Нателла Рустамова**, նույն տեղում:

Այս հարցին իր հրապարակումներից մեկում մանրամասնորեն պատասխանել է Բաքվում գործող ադրբեջանական գորգի ազգային թանգարանի տնօրեն դոկտոր Շիրին Մելիքովան: Պարզվում է, որ 1992 թվականի փետրվարի 29-ին թուրքերը սկսել էին Շուշիից Բաքու էվակուացնել գորգերի թանգարանի ամբողջ հավաքածուն, որի կազմում կար 246 առարկա: Ընդհանուր առմամբ Բաքու էր տեղափոխվել 183 առարկա, այդ թվում ութսուն գորգ, երեսունհինգ կարպետ և կարպետատիպ գործվածք, երեսունինը զարդ, քսանինը ասեղնագործություն և տարազի մաս: Թանգարանում մնացել էր 63 առարկա՝ հիսունվեց պղնձե առարկա, վեց գորգատիպ առարկա և մեկ ասեղնագործություն[29]: Այսինքն՝ Շուշիի թանգարանից Բաքու էր տեղափոխվել գորգերի ողջ հավաքածուն: Այս ամենը չէր կարող անհայտ լինել Վարդան Ասծատրյանի հավաքածուի և ընդհանրապես 2012 թվականին Շուշիում բացված արցախյան գորգերի թանգարանի շուրջ Բաքվում բարձրացված ու մինչ այժմ էլ շարունակվող աղմուկի հեղինակներին: Շիրին Մելիքովայի հաջորդ հայտարարությունը նույնպես հակասում է վերը հիշատակված բոլոր գրչակների կողմից Շուշիի հայոց գորգերի թանգարանի հավաքածուի ձևավորման պատմությանը: Պարզվում է, որ «2011 թվականին սփյուռքի տրամադրած դրամական միջոցներով Շուշիում կաազմակերպվել է գորգի թանգարան»[30]: Այս դեպքում էլ նույն գրչակների համար, թվում է, թե պարզ պետք լիներ, որ Վարդան Ասծատրյանը ոչինչ էլ չի գողացել մինչ 1992 թվականի փետրվարի վերջերը Շուշիում գոյություն ունեցած ադրբեջանական գորգերից և իր հավաքածուն էլ հետևաբար ոչ մի կապ չի կարող ունենալ իրենց բարբաջանքների հետ:

Ուղղակի անբացատրելի է, թե այդ գրչակները, օրինակ, Նաթելլա Ռուստամովան ինչպես է իր հրապարակման վերջում հայտարարում, թե «հայկական օկուպացիայից ազատագրված ողջ տարածաշրջանում արդեն վերածնվում է բնիկ ադրբեջանական ղարաբաղյան գորգագործությունը: Մեկ շաբաթ առաջ Ադրբեջանի մշակութային մայրաքաղաք Շուշայում նախագահ Իլհամ Ալիևը բացեց վերականգնված գորգի թանգարանը, որտեղ արդեն գործում է «Կրկին հայրենի հողում. Ղարաբաղի արվեստների մարգարիտը» ցուցադրությունը: Թանգարանի ցուցանմուշներն են ղարաբաղյան ա-

[29] Директор музея ковра **Ширин Меликова:** Азербайджанские ковры возвращаются в Шушу (фото).-МОСКВА-БАКУ, 22 сентября,2021, **https://ru.oxu.az/culture/4459**

[30] **Ширин Меликова,** նույն տեղում:

ռաջին պատերազմի ժամանակ Շուշայից դուրս բերված գորգերը և արվեստի այլ առարկաներն են, որոնք այժմ վերադարձվել են հայրենիք»[31]: Հասկանալի է, որ Շուշիից «ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ Բաքու տեղափոխված «գորգերն ու արվեստի այլ առարկաներ» գրեթե երեսուն տարվա ընթացքում պարոն Ասծատրյանը չէր կարող «անօրինական կերպով» դուրս բերել նույն քաղաքից:

Այս նույն տրամաբանությամբ է շարադրված նաև Ռոյա Թաղիևայի հոդվածը, ամեն դեպքում նա դոկտոր- պրոֆեսոր է և արտերկրում ունի մեծ հեղինակություն ունեցող գորգագետի համբավ[32]:

Իսկ ինչ վերաբերում է «վերականգնված ու վերնորոգված գորգագործական պատկերասրահին», այսինքն՝ Շուշիի գորգերի թանգարանի շենքին, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ այն վերականգնվել է Արցախի Հանրապետության իշխանությունների կողմից տասնհինգ տարի առաջ:

Ամփոփելով այս անդրադարձը՝ հարկ ենք համարում նշել, որ հնարավոր չէ Վարդան Ասծատրյանի հավաքածուի ձևավորման «թուրքական վարկածով» բոլոր ոգևորվածներին այստեղ հիշել, ուղղակի կարծում ենք ակնհայտորեն պարզ դարձան նրանց բոլորի մեկնաբանությունների սնանկությունն ու ուղղվածությունը, թե հայերը գորգ չեն գործել, նրանք ամենուր սեփականացրել ու սեփականացնում են «ադրբեջանական» մշակույթը: Մեր համար դա նորություն չէ, դա վերացնելու համար պետք է պետական մոտեցում, համապատասխան հաստատությունների՝ գորգի թանգարան-գիտահետազոտական կենտրոնի և նմանատիպ այլ հաստատությունների հիմնում, որոնց միջոցով էլ մի քանի տասնամյակի ընթացքում հնարավոր կլինի համապատասխան համաշխարհային մասնագիտական շրջանակներին ներկայացնելու հայոց գորգագործական մշակույթի ամբողջ պատմամշակութային նկարագիրն ու դրա դերը կովկասյան և ընդհանրապես առաջավորասիական գորգագործական կենտրոնների ձևավորման գործում:

---

[31] **Нателла Рустамова**, նույն տեղում:
[32] **Ройа Тагиева,** նույն տեղում:

SHUSHI CARPET MUSEUM COLLECTION AS AN EXCLUSIVE SOURCE OF STUDY OF ARMENIAN CARPET WEAVING CULTURE

POGHOSYAN ASHKHUNJ
Candidate of Historical Sciences, Associate Professor,
Lecturer, GSU
e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

In the last few years, serious problems have arisen over the collection of the carpet museum that existed in Shushi before the 44-day war, the owner of which, Vardan Astsatryan, managed to move most of it to Yerevan before the fall of Shushi.

The collection has been created over the past twenty years, as a result of the ethnographic-collective work of Mr. Astsatryan in the villages of Artsakh. The problem is that on this occasion, Azeri carpet weavers and journalists, denying the fact that Armenians are engaged in carpet weaving, accuse Vardan Astsatryan of stealing the collection of the Azerbaijani carpet museum there before the liberation of Shushi and moving it to Yerevan. The article discusses these accusations in detail and reveals that they are baseless. At the same time, the essence of the so-called "Azerbaijani carpet" concept is revealed, as well as the ethnic communities that have played a key role in the formation of carpet weaving traditions in the South-Eastern Caucasus.

This scandal, raised by the Azerbaijani side, once again proves that the tribe that came to the South-Eastern Caucasus is trying to justify its existence with fabricated myths and at the same time assimilating the cultural heritage of the natives to present itself as a culturally gifted phenomenon.

Keywords: *Shushi, carpet, Vardan Astsatryan, museum, Azerbaijani carpet, Artsakh, Tatian, Lezgian, Armenian.*

КОЛЛЕКЦИЯ ШУШИНСКОГО МУЗЕЯ КОВРОВ КАК ЭКСКЛЮЗИВНЫЙ ИСТОЧНИК ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОЙ КОВРОВОЙ КУЛЬТУРЫ

ПОГОСЯН АШХУНДЖ
Кандидат исторических наук,
Преподаватель ГГУ
электронная почта: ashkhunjpoghosyan@gmail.com

В последние несколько лет возникли серьезные проблемы относительно музея ковров, существовавшего в Шуши до 44-дневной войны. Владелец этой коллекции Вардан Асцатрян успел до падения Шуши перевезти ее основную часть в Ереван. Коллекция создавалась в течение последних двадцати лет, в итоге этнографически-собирательских работ г. Асцатряна в селах Арцаха. Проблема в том, что по этому поводу азербайджанские средства массовой информации и ковроведы, отрицая факт занятия армянами ковроделием, обвиняют Вардана Асцатряна в хищении коллекции ковров из раннее существующего в г. Шуши музея азербайджанского ковра и в перевозе азербайджанских ковров в Ереван до освобождения Шуши.

В статье подробно рассматриваются эти обвинения и раскрывается их беспочвенность. При этом раскрывается сущность так называемого понятия «азербайджанский ковер», а также предстовляются те этнические общности, которые сыграли ключевую роль в формировании традиций ковроткачества на Юго-Восточном Кавказе. Этот скандал, поднятый азербайджанской стороной, в очередной раз доказывает, что пришедшее на юго-восточный Кавказ племя всячески пытается обосновать свое существование с фабрикованными мифами и в то же время, присваивая культурное наследие местных жителей, представить себя культурно одаренным явлением.

Ключевые слова: *Шуши, ковер, Вардан Асцатрян, музей, азербайджанский ковер, Арцах, татский, лезгинский, армянский.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 30.04.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 02.05.2022թ.: